

չունին: Իմաստը զանոնք չի կապեր. անոնք պաստառին վրայ բուռերով նետուած գոյներ են, ծեփեր են, որոնք cinemaի մը շարժականութիւնն ունին: Անոնք մտածումէ աւելի միեւնոյն սեռին պատկանող տպաւորութիւններ են, որ հետզհետէ, տող առ տող, կ'երթան ոտանաւորին ամբողջութիւն մը տալու. այդ ամբողջութիւնը տպաւորութեան համադրութիւնն է,– բանաստեղծին ուժականութիւնը (dynamisme), մտածումներուն մասաւորումը:

Այդ կերպ արուեստով թելադրուած տպաւորութիւն մը անշուշտ մեկին ու որոշ պիտի չըլլար: Մղձաւանջ մըն է ան որ քեզ իրեն կ'ենթարկէ. կը փլի հոգիիդ վրայ եւ կը ճնշէ զայն: Դուն ոչինչ կը տեսնես Եարճանեանի մէջ, բայց կ'ընդնշմարես ամէն բան: Մայրամուտի արիւններուն ետեւ լուսագունդին եղերական վախճանը, ովկեաններու ընդերքէն անցնող մրրիկները, հրդեհներու ծովաին միջեւ փշրուող ճրագները կը զգաս առանց ըմբռնելու կամ կ'ըմբռնես առանց տեսնելու. պաստառին ներկերը չեն խօսիր քեզի, այլ կը ձգեն որ իրենց ետեւ ծածկուած խօսքը դէպի դուրս մղուի իրենցմով երփնուած: Ներաշխարհներու ժպիտն է այս, աղաղակի փոխուած Սիամանթօի նման հզօր գրչի մը տակ: Ու քերթողը խորհրդապաշտ է ու միաստիք: Իբրեւ խորհրդապաշտ կ'ընթանայ Անրի տը Ռէնիէի, Մօրիս Մէթելինսկի եւ Վէռհառնի ճամբով: Այս վերջինին հետ այն սերտ աղերսը ունի, որ երկուքին ալ խորհրդապաշտութիւնը (symbolisme) ծագում առած է *վիպական* դպրոցէն՝ *romantisme*էն: Հիւկօյի սանձակոտոր, գունագեղ եւ ոգեկոչող արուեստէն շատ բան կայ իրենց մէջ:

Իբրեւ միաստիք, Սիամանթօ գրեց Յեղափոխութեան Նարեկը եւ Յովհաննո Յայտնութիւնը: Հոգեւորականները բազմագոյ ծովուն եւ լեռան փոթորիկներուն մէջէն ընդնշմարել կարծեցին Եհովային լուսահեղ դէմքը. մեր քերթողը գրեթէ նոյնը ըրաւ: Արեան ծփանքներուն եւ հրդեհուող ցորեաններուն մէջէն հետապնդեց Յաղթանակին լուսաւոր իրանը: Տարբերութիւնը շրջանի եւ հաւատալիքի տարբերութիւնն է: Արուեստը եւ հանգամանքները նոյնն